



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՏԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԻ 100-ԱՄԵԱԿԻ ՅԻՇԱՏԱԿՈՒՄ ԹԵՄԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ատանայի Կոտորածին 100-րդ տարեդարձին առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի յանձնարարությամբ, Կիլիկիոյ բոլոր թեմերու եկեղեցիներուն մէջ հոգեհանգստեան յատուկ պաշտօն պիտի կատարուի եւ մեր հոգեւոր հայրերը պիտի անդրադառնան այդ դէպքերուն ու հետեւանքներուն:

Առ այդ, Վեհափառ Հօր տնօրինումով եւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կարգադրությամբ, Կիրակի 26 Ապրիլին, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ պիտի ոգեկոչուի Ցեղասպանութիւնը 6 տարիով կանխած Ատանայի հաւաքական սպանդի զոհերուն յիշատակը, միաժամանակ մեր ժողովուրդը հրաւիրելով աղօթք բարձրացնելու անմեղ զոհերու յիշատակին:

Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Էսսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Ս. Պատարագին, պիտի փոխանցէ օրուան յատուկ իր պատգամը եւ պիտի կատարէ եկեղեցւոյ Նոր մկրտարանին օծումը:

Պատարագէն ետք, ինչպէս նշեցինք, հոգեհանգստեան յատուկ պաշտօն պիտի կատարուի Ատանայի կոտորածին զոհերուն 100-ամեակին առիթով:

PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT HOLY MARTYRS CHURCH AND REQUIEM SERVICE ON THE 100TH ANNIVERSARY OF THE ADANA MASSACRES

In commemoration of the 100th anniversary of the Adana massacres, by the ordinance of H.H. Catholicos Aram I, on Sunday, April 26th special requiem service will be offered in all churches of the Holy See of Cilicia.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and deliver the sermon at Holy Martyrs Church in Encino. During Divine Liturgy, the Prelate will consecrate the new baptismal font.

At the conclusion of services the Prelate will preside over the requiem in memory of the Adana martyrs.

Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ Ս. ՏՐԴԱՏ ԵՒ Ս. ԱՇԽԵՆ ՄԱՏՐԱՆ ՄԵՋ

Ինչպես ծանօթ է, Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն» մատրան մէջ իւրաքանչիւր ամսուան առաջին Շաբաթ երեկոյեան տեղի կ'ունենայ եկեղեցական արարողութիւն:

Յառաջիկայ Շաբաթ, 2 Մայիսի երեկոյեան ժամը 6ին, Ս. Պատարագ պիտի մատուցուի մատրան մէջ, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր եւ մասնակցութեամբ հոգեւորականներու:

Ս. Պատարագը պիտի մատուցէ Զոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

Արարողութեան մասնակցութիւն պիտի բերեն թեմիս եկեղեցիներու երիտասարդաց խմբակներու անդամ-անդամուհիներ:


Նոյն օրը, կէսօրէ ետք ժամը 2:30ին, տեղի պիտի ունենայ երիտասարդական հաւաք:

DIVINE LITURGY AND YOUTH GATHERING AT THE PRELACY

On Saturday, May 2nd, monthly Divine Liturgy will be celebrated at the Prelacy “St. Dertad and St. Ashkhen” Chapel. Divine Liturgy begins at 6:00 p.m., and the celebrant is Very Rev. Fr. Barthev Gulumian.

At 2:30 p.m., members of the Armenian Church Youth Association (ACYA) will gather at the Prelacy “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall for a presentation on the Nine Fruits of the Holy Spirit by fellow ACYA members. A reception will take place following the presentation.

ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՍՐԱՅԻՆ ՄԵՋ, ՇՆՈՐՀԱՅԱՆԴԵՍ՝ ՓՐՈՖ. ՅԱՐՈՒԹ ՊԱՐՍԱՄԵԱՆԻ «RESURRECTION WITH CANE AND SHOE» ՀԱՏՈՐԻՆ



Կիրակի, 3 Մայիսին, կէսօրէ ետք ժամը 4ին, Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուի Տէր Ղազարեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ գրական ձեռնարկ մը՝ Փրոֆ. Յարութ Պարսամեանի նոր հրատարակուած գիրքին ցուցահանդէսը, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր: Շնորհահանդէսը կազմակերպուած է Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան տարածման յանձնախումբին կողմէ:

Փրոֆ. Յարութ Պարսամեան կը պատկանի Բ. Աշխարհամարտէն ետք հայրենադարձներու սերունդին:

Ան իր յուշերն ու փորձառութիւնները կը

պատմէ իր «Resurrection with Cane and Shoe» հատորին մէջ, անդրադառնալով ստալինեան օրերու ծանր պայմաններուն ու հալածանքներուն, ապա նաեւ, հայրենիքէն հեռանալէ ետք իր արձանագրած նուաճումներուն ու բազմաթիւ երեսներով վերականգնումին:

Հատորը պիտի ներկայացնեն Փրոֆ. Միհրան Աղպապեան եւ Պրն. Տիգրան Պարսամ: Պիտի կիրարկուի գեղարուեստական յայտագիր: Փակման ու օրհնութեան խօսք պիտի արտասանէ Առաջնորդ Սրբազանը:

Յայտնենք, որ Փրոֆ. Յարութ Պարսամեան տարեսկիզբին յատուկ հիմնադրամ մը հաստատած էր Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ, նպաստելու համար հաշմանդամ հայ ուսանողներու: Այս հատորի հասոյթը պիտի տրամադրուի այդ հիմնադրամին:

BOOK PRESENTATION AT THE PRELACY

On Sunday, May 3rd, the book presentation of Professor Harut Barsamian's *Reusrrrection with Cane and Shoe* will take place at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall. The event begins at 4:00 p.m.

The event is taking place under the auspices of the Prelate and has been organized by the Prelacy Outreach Committee. The book will be presented by Prof. Mihran Agbabian in Armenian and Mr. Dikran Barsam in English. An artistic program will also take place.

All proceeds from the sale of the book will benefit the "Harut Barsamian Disabled Armenian Students Scholarship Fund" established by the author under the auspices of the Western Prelacy.

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 94ՐԴ ՏԱՐԵԼԻՅԸ ԹԵՄԻՍ ՄԷՋ

Ուրբաթ, 24 Ապրիլը, Հայկական Յեղասպանութեան 94-րդ տարելիցն է:



Այս առիթով, հայ ժողովուրդը, մայր հայրենիքին թէ սփիւռքեան օճախներու մէջ, բազմազան նախաձեռնութիւններով ու հանդիսութիւններով յարգեց յիշատակը մեր 1.5 միլիոն նահատակներուն:

Մեր Թեմին մէջ եւս տեղի կ'ունենան յիշատակի արարողութիւններ, ժողովրդային ձեռնարկներ, բողոքի ցոյցեր ու քայլարշաւներ:

Մեր ազգային վարժարաններու աշակերտները, իրենց կարգին, շաբթուան ընթացքին կազմակերպուած յուշ երեկոններով, հոգեհանգստեան արարողութիւններով,

մոմավառութեամբ, ծառատնկումով եւ տարբեր ձեռնարկներով յարգեցին յիշատակը մեր նահատակներուն:

Երեքշաբթի, 21 Ապրիլի առաւօտուն, Supervisor Մայքըլ Անթոնովիչի հրաւերով, Լոս Անճելըսի Board of Supervisors-ի նիստին, Լոս Անճելըսի քաղաքապետարանը նշեց Յայկական Յեղասպանութեան 94-ամեակի յիշատակը, եւ այս մասին հռչակագիր մը որդեգրեց: Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Գերայ. Ս. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան յարգանքի խօսքը արտասանեց: Հանդիսութեան ներկայ էին Հոգշ. Ս. Պարթեւ Վրդ. Կիլիմեան, Արժ. Ս. Խորէն Ա. Քհնյ. Հապէշեան եւ Արժ. Ս. Արտակ Քհնյ. Տեմիրճեան:

Ներկայ էին նաեւ Ազգային Վարչութեան անդամ Տիար Վահրիճ Փիլաւճեան, ժողովականութեան ներկայացուցիչներէն Տիար Փեգլար Փիլաւճեան եւ Հայ Դատի ներկայացուցիչներ:

Հանդիսութեան ընթացքին, յատուկ յիշատակում կատարուեցաւ Տիրամայր Մարի Մարտիրոսեանի մահուան մասին ու ցաւակցական արտայայտութիւն փոխանցուեցաւ Առաջնորդ Սրբազանին:

Երեքշաբթի, 21 Ապրիլի կեսօրին, Կլենտլէյ Memorial հիւանդանոցի նախաձեռնութեամբ, ոգեկոչելու համար հայկական ցեղասպանութեան զոհերու յիշատակը, նկարչական ցուցահանդէս մը եւ յատուկ ձեռնարկ մը տեղի ունեցաւ հիւանդանոցի սրահին մէջ: Հոգևոր աղօթք կատարեցին, անգելրէնով եւ հայերէնով, Արժ. Ս. Խորէն Ա. Քհնյ. Հապէշեան, Արժ. Ս. Արտակ Քհնյ. Տեմիրճեան եւ Արժ. Ս. Կոմիտաս Թորոսեան:

Կազմակերպութեամբ Լոս Անճելըս քաղաքի իրաւաբան Rocky Delgadillo-ի գրասենեակին, Չորեքշաբթի, 22 Ապրիլի երեկոյեան, Լոս Անճելըսի քաղաքապետարանին մէջ, հայկական արուեստի ցուցահանդէս մը տեղի ունեցաւ: Արժ. Ս. Կոմիտաս Քհնյ. Թորոսեան ներկայ եղաւ ցուցահանդէսին եւ փոխանցեց Առաջնորդ Սրբազան Զօր օրհնութեան խօսքը:

Հինգշաբթի, 23 Ապրիլի կեսօրին, Քալիֆորնիոյ մայրաքաղաք Sacramento-ի մէջ, Քալիֆորնիոյ խորհրդարանի երկու տուները իրենց նիստը յատկացուցած էին Յայկական Յեղասպանութեան յիշատակումին: Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Ս. Վահան Քհնյ. Կոստանեան ներկայ եղաւ նիստին, փոխանցեց Առաջնորդ Սրբազանին յարգանքի խօսքը եւ կատարեց Senate-ի նիստի բացան աղօթքը: Ներկայ էին Հայ Դատի ներկայացուցիչներ: Ծերակոյտի հրատարակեց Յեղասպանութիւնը ոգեկոչող յիշատակագիր մը:

Նշենք նաեւ, որ զոյգ ժողովներու նիստերուն, ցաւակցական արտայայտութիւն արձանագրուեցաւ Տիրամայր Մարի Մարտիրոսեանի մահուան առիթով:

Ուրբաթ, Ապրիլ 24-ի առաւօտեան, Լոս Անճելըսի քաղաքապետութիւնը կազմակերպած է Յայկական Յեղասպանութեան 94-ամեակին նուիրուած ոգեկոչման արարողութիւն մը: Հանդիսութիւնը կը գլխաւորէ քաղաքապետական խորհուրդի նախագահ Էրիք Կարսեթի: Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Գերայ. Ս. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան

ներկայ պիտի ըլլայ նիստին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազանին յարգանքի խօսքը: Ներկայ պիտի ըլլան նաեւ Արժ. Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան եւ Հայ Դատի ներկայացուցիչներ:

Նոյն օրը՝ Ուրբաթ, Ապրիլ 24-ին, առաւօտեան ժամը 10:30ին, Հայկական Յեղասպանութեան Ոգեկոչման Համագաղութային Մարմինի կազմակերպութեամբ, Յեղասպանութեան զոհերու յիշատակին, Ս. Պատարագ պիտի մատուցուի Մոնթեպելլոյի Յուշարձանին առջեւ, Bicknell Park-ի մէջ, մասնակցութեամբ Հայ Առաքելական, Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական Եկեղեցիներու Հոգեւորականներուն: Յաւարտ Ս. Պատարագի, ներկայ պաշտօնական անձնաւորութիւններն ու ուխաւոր ժողովուրդը ծաղկեպսակներ պիտի զետեղէն Յուշարձանին առջեւ: Ապա, ոգեկոչական ձեռնարկ եւ հանդիսաւոր հոգեհանգիստ պիտի կատարուի:

Ապրիլ 24-ի առաւօտեան, Հայ Միացեալ Ուսանողաց Միութեան կազմակերպած քայլարշաւ հաւաքը տեղի պիտի ունենայ Little Armenia-ի մէջ, Հոլիվուտ: Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Վիգէն Ա. Զինյ. Վասիլեան ներկայ պիտի ըլլայ քայլարշաւին. պիտի կատարէ բացման աղօթքը եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Հօր պատգամը:

Նոյն օրը, Ապրիլ 24-ին, կ.ե. ժամը 4:00-ին, բողոքի ցոյց մը տեղի պիտի ունենայ Լոս Անճելըսի թրքական հիւպատոսարանին առջեւ, մասնակցութեամբ երիտասարդական միութեան անդամներուն եւ բազմաթիւ հայորդիներուն:

Յեղասպանութեան զոհերու ոգեկոչման ձեռնարկներու ծիրին մէջ, Կլենտլի քաղաքապետարանը եւս կազմակերպած է Ապրիլեան Եղեռնի ոգեկոչման յատուկ ձեռնարկ մը, որ տեղի պիտի ունենայ Ապրիլ 24-ի երեկոյեան, Կլենտլի Ալէքս հանդիսասրահին մէջ:

Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին: Ներկայ պիտի ըլլան նաեւ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան եւ Արժ. Տ. Վազգէն Զինյ. Աթմաճեան:

APRIL 24TH COMMEMORATIONS WITHIN THE PRELACY AND COMMUNITY

On April 24th, Armenian worldwide will commemorate the 94th anniversary of the Armenian Genocide with various events in remembrance of our 1.5 million martyrs.

A number of commemorative events have already taken place within our Prelacy and community. In Prelacy schools, requiem services, candle lighting, tree planting, and similar events have been taking place since the start of the week.

On Tuesday, April 21st, by the initiative of Supervisor Michael Antonovich, a special presentation took place during the Board of Supervisor's weekly meeting proclaiming April 24 as the "Day of Remembrance for the Armenian Genocide of 1915-1923". Very Rev. Fr. Muron Aznikian, accompanied by Very Rev. Fr. Barthev Gulumian, Archpriest Fr. Khoren Habeshian, and Rev. Fr.

Ardak Demirjian represented the Prelate and delivered the invocation. Community members and ANC-WR Board members were also in attendance. During the presentation, the late Diramayr Marie Mardirossian was remembered and condolences conveyed to the Prelate.

In the afternoon, the directors of Glendale Memorial Hospital had organized an art exhibit in commemoration of the Armenian Genocide which took place at the hall of the hospital. Collective prayers were offered by Archpriest Fr. Khoren Habeshian, Rev. Fr. Ardak Demirjian, and Rev. Fr. Gomidas Torossian.

On Wednesday, April 22nd, Rev. Fr. Gomidas Torossian represented the Prelate at an event organized by Los Angeles City Attorney Rocky Delgadillo and the City Attorney's office in celebration of Armenian art and culture, and conveyed the Prelate's remarks.

On Thursday, April 23rd, a commemoration took place at the California State Legislature in Sacramento during which a proclamation was issued recognizing April 19th through the 26th as "Days of Remembrance of the Armenian Genocide". Pastor of Holy Trinity Church in Fresno Rev. Fr. Vahan Gosdanian represented the Prelate and delivered the invocation. ANC members also participated in the commemoration. During both House and Senate sessions, members of the State Legislature expressed their condolence on the recent passing of Diramayr Marie Mardirossian.

The Los Angeles City Council, headed by President Eric Garcetti, has organized a commemoration which will take place on the morning of Friday, April 24th at City Hall. Very Rev. Fr. Muron Aznikian, accompanied by Rev. Fr. Ardak Demirjian, will attend and convey the Prelate's remarks. ANC-WR board members will also attend.

At 10:30 a.m. on April 24th, a community-wide commemoration will take place at the Armenian Genocide Memorial Monument in Montebello beginning with Divine Liturgy with the participation of the Armenian Apostolic, Catholic, and Evangelical Churches. Divine Liturgy will be celebrated by the Prelate, the sermon will be delivered by H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, Gospel reading by Very Rev. Fr. Andon Saroyan, Rector of the Catholic Church, and Epistle reading by Rev. Joe Matossian, Minister of the Armenian Evangelical Union of North America. Requiem services and commemorations will follow Divine Liturgy.

Also on the morning of April 24th, the annual march of the Unified Young Armenians will take place in Little Armenia beginning at 10:00 a.m. Archpriest Fr. Vicken Vassilian will attend on behalf of the Prelate and will offer the opening prayer.

At 4:00 p.m. the protest at the Turkish embassy will take place, and in the evening a commemoration organized by the Glendale City Council at Alex Theatre. The Prelate will be accompanied by Very Rev. Fr. Muron Aznikian, Very Rev. Fr. Barthev Gulumian, and Rev. Fr. Vazken Atmajian.
